# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**Աշտարակ համայնքում 2024 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացն իրականացնելու, գործընթացի կառավարման հանձնաժողովի՝ քվեարկության արդյունքների ամփոփման նիստի**

11.03.2024թ.

ք. Աշտարակ

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ՝***

**Սամվել Սահակյան**

***Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝***

**Իշխան Բարսեղյան**

***Հանձնաժողովի քարտուղար՝***

**Անահիտ Համբարձումյան**

***Հանձնաժողովի անդամներ՝***

***Անուշ Արամյան, Նվեր Մուրադյան, Կարապետ Առաքելյան, Նազելի Արսենյան, Ժաննա Ավետիսյան, Ռաֆայել Աղամալյան***

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Աշտարակ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում չափորոշիչներին համապատասխանող առաջարկ-նախագծերի քվեարկության արդյունքների ամփոփում.

## Լ Ս Ե Յ Ի Ն

***1. Հանձնաժողովի նախագահ Սամվել Սահակյանին.***

ով արձանագրեց, որ մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցի համաձայն առաջարկ - նախագծերի քվեարկությունն ավարտվել է:

***2. Հանձնաժողովի քարտուղար Անահիտ Համբարձումյանին.***

ով ներկայացրեց քվեարկության դրված ծրագրերի հավաքած միավորները՝ առավելագույն թվից նվազման կարգով.

***I. Մարինե Խուրշուդյան - Խաղահրապարակների կառուցում - 1891 ձայն***

Խմբային առաջարկ /Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Տիգրան Մեծի փողոցի բազմաբնակարան շենքերի բակերում և Արուճ, Կոշ, Նոր Ամանոս և Նոր Եդեսիա բնակավայրերում, խաղահրապարակների կառուցման և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում/

Առաջարկը ներկայացվել է Մարինե Խուրշուդյանի /Աշտարակ/, Մարգարիտ Ղազարյանի /Նոր Ամանոս/, Անահիտ Հովսեփյանի /Արուճ/, Ռիմա Մարտիրոսյանի /Կոշ/, Վահան Հայրապետյանի /Նոր Եդեսիա/ կողմից:

***II. Նարինե Հարությունյան - Ֆուտբոլի խաղադաշտերի կառուցում - 1786 ձայն***

Խմբային առաջարկ /Աշտարակ համայնքի Արագածոտն, Ղազարավան և Ագարակ բնակավայրերում ֆուտբոլի խաղադաշտերի կառուցման և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում/

Առաջարկը ներկայացվել է Նարինե Հարությունյանի /Ղազարավան/, Գևորգ Պողոսյանի /Արագածոտն/ և Հովակիմ Գևորգյանի /Ագարակ/ կողմից:

***III. Մարիետա Հովհաննիսյան - Աշտարակ համայնքի Ուշի և Բազմաղբյուր բնակավայրերում աղբամանների տեղադրում - 940 ձայն***

Խմբային առաջարկ /Աշտարակ համայնքի Ուշի և Բազմաղբյուր բնակավայրերում աղբամանների տեղադրում/

Առաջարկը ներկայացվել է Մարիետա Հովհաննիսյանի /Ուշի/ և Աննա Ամիրխանյանի /Բազմաղբյուր/ կողմից:

***IV. Արմեն Վարդանյան - Նոր Ամանոս բնակավայրի դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում – 907 ձայն***

**3. Հանձնաժողովի նախագահի տեղակալ Իշխան Բարսեղյանին.**

նա ներկայացրեց քվեարկությանը մասնակցության իրավունք ունեցողների նվազագույն շեմը հաղթահարած հետևյալ չորս առաջարկ - նախագծերը՝

***I. Մարինե Խուրշուդյան - Խաղահրապարակների կառուցում - 1891 ձայն***

***II. Նարինե Հարությունյան - Ֆուտբոլի խաղադաշտերի կառուցում - 1786 ձայն***

***III. Մարիետա Հովհաննիսյան - Աշտարակ համայնքի Ուշի և Բազմաղբյուր բնակավայրերում աղբամանների տեղադրում - 940 ձայն***

***IV. Արմեն Վարդանյան - Նոր Ամանոս բնակավայրի դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում – 907 ձայն***

***Հանձնաժողովը որոշեց.***

1.Առաջարկել համայնքի ղեկավարին ՀՀ կառավարության՝ 2023 թվականի նոյեմբերի 2-ի №1890-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջները բավարարող, առավելագույն ձայներ ստացած, 1-ին և 2-րդ տեղերը գրաված առաջարկ-նախագծերի հիման վրա մշակել ծրագրեր, կազմել սուբվենցիոն հայտեր և ներկայացնել ՏԿԵՆ՝ համաձայն հաստատված ժամանակացույցի:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին նվազագույն շեմը հաղթահարած մյուս առաջարկ-նախագծերն իրականացնել այլ ծրագրերի շրջանակներում:

**Հանձնաժողովի նախագահ՝** _____ **Սամվել Սահակյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝** _____ **Անահիտ Համբարձումյան**